ՎԵՆԵՏԻԿԻ ԵՎ ՋԵՆՈՎԱՅԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. 1294 Թ. ԱՅԱՍԻ ԾՈՎԱՄԱՐՏԸ

ՋՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIII–XIV դարերն առանձնանում են ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև տնտեսական փոփոխություններով: Միջերկրական ծովն ու մերձավորարևելյան տարածաշրջանները ժամանակի համաշխարհային տնտեսական զարգացումների գլխավոր հարթակներն էին, ինչն անխուսափելի էր դարձնում ռազմաքաղաքական գերակա կողմերի միջև սրված հարաբերությունները: Մոնղոլների հզոր հայտը Մերձավոր Արևելքում գերակայություն հաստատելուն և Եգիպտոսում մամլուքների իշխանության գալը խորքային ձևափոխումներ առաջացրեցին եվրոպական կողմի աշխարհաքաղաքական ծրագրերում: Պապության և եվրոպական տերություններից զատ դրանցում առանցքային դերակատարում ունեին տվյալ ժամանակի առևտրատնտեսական գերակա կողմերը՝ Վենետիկի և Ջենովայի Հանրապետությունները, որոնք իրենց ձեռքում էին պահում ինչպես միջերկրածովյան, այնպես էլ սևծովյան առևտրի գլխավոր զարկերակները: Վենետիկի, Ջենովայի և Պիզայի Հանրապետությունների միջև անգիջում պայքարը միջազգային առևտրում գերակայություն հաստատելու համար, ի վերջո, վերաճում է պատերազմի: 1256 թ. սկսվում է ջենովա-վենետիկյան առաջին պատերազմը (1256–1270), որը պատմության մեջ հայտնի է Սուրբ Սաբա անվամբ: 1258 թ. հունիսին Աքքայի ափերի մոտ նրանց միջև տեղի է ունենում խոշոր ծովամարտ: Չնայած նավերի թվային գերակշռությանը՝ ջենովական կողմը ջախջախիչ պարտություն է կրում: Դրա հետևանքով Ջենովան ստիպված էր Արևելյան Միջերկրականում իր գլխավոր հենակետն Աքքայից տեղափոխել Տյուրոս, իսկ Վենետիկն իր հերթին՝ Տյուրոսից Աքքա[1]: Հատկանշական է, որ այս իրադարձություններին հանգամանորեն անդրադարձել է Հեթում Պատմիչը, որի հիշատակած թվային տվյալները ճշտորեն համընկնում են եվրոպացի ուսումնասիրողների ներկայացրած համապատասխան թվերին. «Եւ եկին ի Յաքա ՃՆուվէզացն Ծ (50) դալէ և Դ (4) բերդանաւ, որոց գլխաւոր Ըռուս տ Լա-

[1] A. S o p r a c a s a. I trattati con il regno armeno di Cilicia, 1201–1333, Roma, 2001, p. 41–42; F. L a n e. Venice. A Maritime Republic, London, 1973, pp. 74–77. J. E. D o t s o n. Venice, Genoa and the Control of the Seas in the Thirteenth and Fourteenth Centuries.– War at Sea in the Middle Ages and Renaissance, New York, 2003, p. 120.

դոյրքն, և խանգրուեցան ի Վնիցիան դալեացն. և բռնուեցան ի մէջ ընդ Աքա և ընդ Կայֆասն ԻԴ (24) դալէ ճնուէգ. և կորուսին ճնուէգքն ընդ սպանած և ընդ բռնած մինչև ի ՌՉ (1700): Եվ վարուեցան ճնուէգքն ի Յաքայո և փլուցին զիրենց պուրճն և գնացին ճնուէգքն բնակեցան ի Սուր (Տյուրոս – Զ. Գ.)»[2]:

Եթե մինչ այդ Եգիպտոսի սուլթանությունը ռազմամթերքը կարող էր ստանալ նաև խաչակրաց նավահանգիստներով, ապա դրանում դրանց դերը, Այաս-Թավրիզ մայրուղու ձևավորման հետ, կտրուկ նվազում էր: Ավելին, նվաճելով Անտիոքը՝ մամլուքները խաչակիրների տիրույթները կտրեցին Կիլիկյան Հայաստանից, որը նրանց համար տարատեսակ ապրանքների ձեռքբերման կարևոր աղբյուր էր դարձել: Ուստի, պատահական չէ, որ Կիլիկիայի հետ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Եգիպտոսի սուլթանությունն անցնում է վճռական քայլերի: 1285 թ., երբ Լևոն Բ-ի (1269–1289) պատվիրակությունը Կիլիկյան Հայաստանի Տաճարականների առաջնորդի ուղեկցությամբ հաշտություն կնքելու նպատակով ուղևորվել էին մամլուքյան սուլթան Կալաունի մոտ՝ վերջինս գտնվում էր Ասորիքում և զբաղված էր Տրիպոլիի կոմսության հյուսիսում գտնվող Մարկաբ բերդի գրավմամբ: 1287 թ. մամլուքները նվաճում են Լաթաքիա նավահանգիստը, իսկ արդեն 1289 թ. ապրիլի 24-ին Տրիպոլին՝ կոտորելով քաղաքի բնակչությանը: 1291 թ. մամլուքներն իրենց հարվածն ուղղում են Երուսաղեմի թագավորության դեմ՝ մեկը մյուսի հետևից նվաճելով նշանավոր նավահանգիստներ Աքքան, Տյուրոսը, Սիդոնը, Բեյրութը և ծովափնյա մյուս քաղաքներն ու բերդերը[3]:

Այս իրադարձությունների բովում Ջենովայի Հանրապետությունն իր նշանավոր ծովակալ Բենեդետտո Զաքարիային ուղարկում է Արևելք, որտեղ նա 1288 թ. սեպտեմբերի 21-ին Կիպրոսի թագավոր Հենրի II-ի (1285–1324)[4], իսկ դեկտեմբերի 23-ին Կիլիկիայի արքա Լևոն Բ-ի հետ[5] կնքում է ծավալուն առևտրական պայմանագրեր: Ի դեպ, 1289 թ.՝ իր թագադրման առաջին տարում, Հեթում Բ-ն (1289–1306, ընդմիջումներով) ջենովացիներին շնորհում է նս - մի արտոնագիր[6]: Փաստորեն, Արևելյան Միջերկրականում եվրոպացիների

---

[2] *Հեթում Պատմիչի ժամանակագրությունը.– Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II, կազմ. Վ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Երևան, 1956, էջ 70:*

[3] *Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 98, 112–113,* A. D. S t e w a r t. The Armenian Kingdom and the Mamluks. War and Diplomacy during the Reigns of Het‘um II (1289–1307). Leyden, 2001, pp. 56–57:

[4] С. Б л и з н ю к. Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, 1192–1373. М., 1994, с. 34–35.

[5] V. L a n g l o i s. Le Trésor des chartes d’Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 154.

[6] *Նույն տեղում, էջ 162:*

համար որպես հենակետեր մնում էին միայն Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսը:

Տրիպոլիի անկումից շատ չանցած՝ 1289 թ. դեկտեմբերի 28-ին, Հռոմի պապ Նիկողայոս IV-ը (1288–1292) արգելքներ սահմանեց Եգիպտոսի սուլթանության հետ ռազմամթերքի (երկաթ, փայտանյութ), ձիերի, ինչպես նաև պարենամթերքի առևտրի վրա: Իսկ արդեն 1291 թ. օգոստոսի 23-ին Աքքայի և Տյուրոսի անկումից անմիջապես հետո պապությունը տասը տարով արգելեց մամլուքների տերության նավահանգիստների հետ առևտրական բոլոր տեսակի շփումները: Օրինախախտները խստորեն պատժվելու էին: Նրանց նույնիսկ թույլ չէր տրվելու իրենց ունեցվածքը կտակել որևէ մեկին, իսկ ապրանքներն էլ բռնագրավվելու էին: 1290-ական թվականների սկզբին Նիկողայոս IV-ը սկսում է ակտիվ բանակցություններ վարել Արևելքի քրիստոնյա շատ պետությունների, այդ թվում՝ Կիլիկյան Հայաստանի հետ: 1292 թ. հունվարի 23-ի իր վճռով նա հրամայում է Տաճարականներին իրենց գալերներով Հայոց թագավորությանը պաշտպանել մահմեդականների հարձակումներից[7]: 20 գալերից կազմված մի նավակազմ տրամադրվելու էր Տաճարականների և Հյուրընկալների միաբանությունների ասպետներին, որոնք տեղակայվելու էին Կիլիկյան Հայաստանում ու Կիպրոսում: Բացի եգիպտական նավերի վրա հարձակումներ գործելուց, նրանց հանձնարարվել էր նաև արգելափակել մամլուքների հետ առևտուր անող բոլոր մաքսանենգների գործունեությունը: Սակայն հետագայում Բոնիֆացիոս VIII (1294–1303) և Բենեդիկտոս XI (1303–1304) պապերի հռչակած արգելքները կրկին սահմանափակվեցին ռազմամթերքի, ինչպես նաև ստրուկների առևտրով, որոնցով, ի դեպ, համալրվում էր Եգիպտոսի սուլթանության բանակը: Շատ հաճախ պապերն արգելքների քաղաքականությունը պարզապես օգտագործում էին սեփական գանձարան եկամուտներ ուղղելու նպատակով: Մեծ գումարների դիմաց նրանք հատուկ թույլտվություններ էին շնորհում նրանց, ովքեր ցանկանում էին արգելված ապրանքներ վաճառել Եգիպտոսի վաճառականներին: Իրենց հերթին Եվրոպայի ծովային գերտերությունները՝ Վենետիկի, Ջենովայի Հանրապետությունները և Արագոնի թագավորությունն ամենևին մտադիր չէին դադարեցնելու իրենց առևտրական սերտ շփումները մամլուքների հետ: Տրիպոլիի անկման տարում Վենետիկը, իսկ 1290 թ. Ջենովան պայմանագրեր են կնքում Եգիպտոսի սուլթանության հետ, որոնց հետևում է նաև Ա-

[7] Les registres de Nicolas IV, Recueil des bulles de se Pape, pub. par Langlois M., Fascicule VI // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, V. 6, Paris, Ernest Thorin, 1891, pp. 445, 901–905, 913–914.

բագոնի թագավորությունը (1292 թ.)[8]: XIII դ. 80–90-ական թվականներին ձևավորված աշխարհաքաղաքական այս իրավիճակն էլ ավելի է սրում իտալական ծովային հանրապետությունների միջև պայքարը: Տիրենեյան ծովում՝ Մելորիա կղզու մոտակայքում, 1284 թ. օգոստոսի 5–6-ին տեղի ունեցած վճռական ծովամարտում պարտության մատնելով Պիզային՝ Ջենովան, կարելի է ասել, ասպարեզից հեռացրեց իր գլխավոր հակառակորդներից մեկին[9]:

Արևելքում խաչակիրների անկումը, ի թիվս աշխարհաքաղաքական վերը թվարկյալ մյուս խոշոր իրադարձությունների, ամենաշրջադարձային նշանակությունն ունեցավ միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի դերի բարձրացման համար: Այսպես, պապական արգելքների սահմանման արդյունքում Կիլիկյան Հայաստանը, Կիպրոսի թագավորությունը, ինչպես նաև Կրետեն վերածվեցին գլխավոր միջնորդների՝ Եգիպտոսի սուլթանության և եվրոպացիների միջև ընթացող առևտրական կապերում: Ընդ որում, դրանցում Հայկական Կիլիկիայի դերակատարությունն էլ ավելի առանցքային էր, քանի որ Եգիպտոսի սուլթանություն ներմուծվող ռազմամթերքի և ստրուկների զգալի մասը կուտակվում էր կիլիկյան նավահանգիստներում: Է. Աշթորը նշում է, որ մահմեդական Լևանտի (Եգիպտոս ու Ասորիք) և Հարավային Եվրոպայի միջև առևտրական փոխհարաբերություններում Հայոց թագավորության դերն ավելի մեծ է եղել, քան Կրետեի և Կիպրոսի[10]: Գ. Բրատիանուն գտնում է, որ Այասն իր ծաղկման ժամանակաշրջանում գերազանցել է նույնիսկ Պերային, որը, փաստորեն, այդ ընթացքում սևծովյան առևտրի գլխավոր դարպասն էր[11]: Պատահական չէ, որ Ջենովայի և Վենետիկի Հանրապետությունների միջև տեղի ունեցած երկրորդ պատերազմի (1294–1299) սկզբից ևեթ կիլիկյան ծովափը հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Ինչպես նկատում է Ֆ. Լեյնը՝ Աքքայի անկումից հետո Այասը դարձավ իտալական հանրապետությունների հակամար-

---

[8] Г. Микаелян. История Киликийского Армянского государства. Ереван, 1952, с. 425; *Կ. Մուրաֆյան. Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 453,* E. Ashtor. Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983, pp. 5, 17–21, A. Sopracasa. *Նշվ. աշխ., էջ 64–65;* J. Richard. Le Royaume de Chypre et l'embargo sur le commerce avec l'Egypte (fin XIIIe – dnbut XIVe siՀcle).– Acadnmie des Inscriptions & Belles – Lettres, Comptes rendus des snances de l'Annne, Janvier – Mars, Paris, 1984, p. 120–123.

[9] G. Pistarino. L'apogeo della Meloria.– La capitale del Mediterraneo: Genova nel Medioevo, Collana Storica di Fonti e Studi Italo-Ellenica, dir. da Pistarino G., Mazarakis A., Genova, 1993, p. 146–152. J. Pryor. The Maritime Republics.– The New Cambridge Medieval History, V. 5, c. 1198-c. 1300, ed. D. Abulafia, Cambridge, 1999, pp. 438–439.

[10] E. Ashtor. *Նշվ. աշխ., էջ 43–44, 104:*

[11] G. Bratianu. Recherches sur le commerce Génois dans le mer Noire du XIIIme siècle, Paris, 1929, p. 161–162.

տության կենտրոնը[12]: Այդ անցքերի մասին մանրամասն նկարագրություններ կան «Գործք Կիպրացվոց»-ի՝ Տյուրոսի Տաճարական ասպետներին վերաբերվող սկզբնաղբյուրների հավաքածուում: Դրանցից տեղեկանում ենք, որ 1293 թ. վենետիկյան գալերները ժամանել էին Այաս և այնտեղ բռնագրավել ջենովական առևտրական մի նավ: Ապա վենետիկցիներն իջել էին ափ, ինչը ստիպել էր Այասի ջենովացի բնակիչներին փախչել գյուղեր՝ ավերի ու թալանի թողնելով քաղաքում գտնվող իրենց առևտրականը[13]: Ի վերջո, Այասի ափերի մոտ վենետիկյան և ջենովական նավատորմների միջև տեղի է ունենում ծովային խոշոր ճակատամարտ, որին նույն ժամանակամիջոցում ստեղծագործած ջենովացի Անանուն մի բանաստեղծ մի ամբողջ պոեմ է նվիրել[14]:

Բանաստեղծը պոեմը սկսում է իր ժամանակին հատուկ գեղարվեստական ոճով: Լինելով ջենովացի՝ վերջինս պետք է առավել փառաբաներ իր հայրենակիցներին: Նրա խոսքերի համաձայն՝ վենետիկցիների հետ այս նշանավոր ծովամարտն արժանի է պատմության մեջ ոսկյա տառերով գրվելուն, իսկ ջենովացիների հաղթանակն անվանում է «Աստծո կողմից շնորհված մեծ հաղթանակ», ինչն արդեն իսկ վկայում է դրա կարևորության մասին[15]:

Յու. Բարսեղովը գտնում է, որ Այասի ափերի մոտ ոչ թե մեկ, այլ երկու ծովամարտ է եղել: Նա իր հոդած սկզբնաղբյուրը սխալմամբ վերագրել է Հեթում Պատմիչին, այնինչ, իրականում, Վ. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» ժողովածուի առաջին հատորում տեղ գտած խնդրո առարկա տողերը պատկանում են Հեթում Բ-ի «Տարեգրությանը»: Չնայած որ Հեթում Պատմիչը ևս Այասի ծովամարտի վերաբերյալ արժեքավոր հիշատակություններ ունի, սակայն դրան Յու. Բարսեղովը, փաստորեն, չի անդրադարձել: Իսկ երկրորդ ծովամարտի եղելությունը նա կապել է արդեն հիշատակված ջենովացի Անանուն պոետի ստեղծագործության հետ, որի համաձայն՝ այն տեղի է ունեցել 1294 թ. մայիսի 22-ին[16]: Ավելի հստակ պատկեր ստանալու համար հարկ

---

[12] F. L a n e. Venice. *Նշվ. աշխ., էջ 82–83:*

[13] Les gestes des Chiprois: Recueil de chroniques françaises ecrites en Orient aux XIIIe & XVIe siécles, de Navarre P., de Monréal G., V. 5, Genève, 1887, p. 277–281. P. C r a w f o r d. The 'Templar of Tyre' : Crusade Texts in Translation, Part III of the 'Deeds of the Cypriots, Burlington, 2003, pp. 133–135.

[14] Rime istoriche di un Anonimo Genovese: Vissuto nei secoli XIII e XIV, Tratte da un codice, dell'Avv. Matteo Molfino di Genova, per cura del Bonaini F.– Archivio Storico Italiano, Appendice 18, T. IV, Firenze, 1847, p. 10–15.

[15] Rime istoriche di un Anonimo Genovese, p. 10.

[16] *Հարկ է նկատել, որ սույն արժեքավոր հոդվածով Յու. Բարսեղովն ամենևին նպատակ չի հետապնդել պարզել Այասի ծովամարտի մանրամասները, քանի որ նրա հետազոտության գլխավոր առարկան Կիլիկյան Հայաստանի ափերին տեղի ունեցած*

ենք համարում ամբողջությամբ ներկայացնել թե՛ Հեթում Բ-ի «Տարեգրությունում», և թե՛ Հեթում Պատմիչի «Ժամանակագրությունում» տեղ գտած հատվածները ծովամարտի մասին: Նախ, սկսենք Հեթում Բ-ի «Տարեգրությունից», ըստ որի՝ 1293 թ. «Ճնուիզացն դալէք ԺԲ (12) կռուեցան ի յԱյաս ընդ ԼԲ (32) դալէք և ընդ դարիթ Վնիսեացոցն և շահեցան ի նոցանէ ԻԴ (24) ընդ դարիթ և ընդ խալէ»[17]: Նման բովանդակություն ունի Հեթում Պատմիչի նկարագրությունը. 1294 թ. «Յայսմ ամի Ճնուէզացն ԺԸ (18) դալէ կռուեցան ի Յայաս ընդ ԼԲ (32) դալէ և ընդ դարիտ Վնէցիանացն և շահեցան ի նոցանէ ԻԴ (24) ընդ դարիտ և ընդ դալէ»[18]:

Հեթում Պատմիչն իր «Ժամանակագրությունն» ավարտել է 1294 թ.՝ հենց այս իրադարձության նկարագրմամբ, ուստի, ամենայն հավանականությամբ, նա այդ դեպքերին ականատես է եղել: Ինչպես տեսնում ենք, առաջին սկզբնաղբյուրում նշված է, որ դեպքը պատահել է 1293 թ., իսկ ջենովացիներն ունեցել են 12 գալեր, մինչդեռ երկրորդում ծովամարտը թվագրված է 1294 թ., ջենովական գալերների թիվն էլ 18 է: Դժվար չէ նկատել, որ դրանցում տեղ գտած մյուս բոլոր տվյալներն ամբողջովին նույնական են: Անշուշտ, խոսքն իրականում միևնույն իրադարձության մասին է: Ինչպես նշեցինք, այս դեպքերն առավել հանգամանորեն ներկայացված են «Գործք Կիպրացվոց»-ի ժողովածուում, որտեղ, բացի մի քանի փոքր բախումներից, հիշատակված է Այասի ափերին տեղի ունեցած միայն մեկ խոշոր ծովամարտ: Ընդ որում, այս սկզբնաղբյուրում ճակատամարտին մասնակցած վենետիկյան գալերների թիվը (32) ճշտորեն համընկնում է վերոնշյալ հայկական ժամանակագրություններում գրանցված համապատասխան տվյալների հետ[19]: Գր. Միքայելյանը նույնպես, հիմք ընդունելով Հեթում Բ-ի «Տարեգրություն»-ը, գրում է ծովային մեկ ճակատամարտի մասին[20]: Ավելին, նույն կերպ են վարվել նաև խնդրին անդրադարձած մի շարք միջնադարագետներ[21]:

ծովահենային դեպքերն են եղել (տե՛ս Ю. Барсегов. Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море.– ИФЖ, 1970, № 3, с. 80*):*

[17] *Հեթում Բ-ի տարեգրությունը.– Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. I, կազմ. Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 86:*

[18] *Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, էջ 80:*

[19] P. Crawford. *Նշվ. աշխ., էջ 135:*

[20] Г. Микаелян. *Նշվ. աշխ., էջ 388–389:*

[21] A. Bozoyan. Le cadre juridique du commerce de la Cilicie armnnienne, p. 131; G. Pistarino. Dal governo dei due capitani al Doge perpetuo.– La capitale del Mediterraneo: Genova nel Medioevo, Collana Storica di Fonti e Studi Italo-Ellenica, dir. da Pistarino G., Mazarakis A., Genova, 1993, p. 161–163; J. E. Dotson. Venice, Genoa and the Control of the

Եվ այսպես, 1294 թ. մայիսի 22-ին Այասի ափերի մոտ ջենովական նավերը, Նիկոլո Սպինոլայի հրամանատարությամբ, բախվում են վենետիկյան ընդհանուր թվով 32 գալերի և տարիդաների (նավի տեսակ) հետ, որոնց առաջնորդում էր ծովակալ Մարկո Բազիլիոն: Չնայած անհամեմատ քիչ նավեր ունենալուն՝ ջենովացիները փայլուն հաղթանակ են տանում՝ գավթելով վենետիկյան 24 նավ (ըստ «Գործք Կիպրացվոց»-ի՝ 25) և գերի վերցնում Մարկո Բազիլիոյին: Վենետիկցիներից բռնագրավվում է ավելի քան 500.000 սառակինոսյան բյուզանդ գումարի ապրանք: Որպես պատասխան՝ 1297 թ. վենետիկյան մի նավապետ՝ Տեոֆիլո Մորոզինին, իր հայրենակիցների հետ ավերում է Այասում ջենովացիներին պատկանող շուկան[22]:

Ի վերջո, 1298 թ. սեպտեմբերի 7-ին՝ Ադրիատիկ ծովում գտնվող Կուրցոլե կղզու մոտակայքում ջախջախիչ պարտություն կրելուց հետո, Վենետիկը 1299 թ. Միլանում խաղաղության պայմանագիր է կնքում Ջենովայի հետ: Ջենովայի գերակայությունը միջազգային առևտրում պահպանվեց մինչև 1380 թ.՝ Քիոջեի ծովամարտում Վենետիկից կրած պարտությունը[23]:

Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Այասի ափերին վենետո-ջենովական ծովամարտը եղել է բեկումնային երկու հանրապետությունների միջև Արևելքում ազդեցության ոլորտների բաժանման համար: Այասն իր մեջ կուտակել էր դեռևս Հեթում Ա-ի (1226–1269) ժամանակներից հաստատված Արևմուտքի ու մոնղոլների տնտեսական, նաև քաղաքական խոշոր նախագծերի տրամաբանությունը: Ահա ինչու հատկապես խաչակրաց նավահանգիստների անկումից հետո Այասն հայտնվեց Վենետիկի ու Ջենովայի բախման կիզակետում, իսկ արդեն ծովամարտի ելքով պայմանավորվեց Միջերկրական ու Սև ծովերում նրանց ազդեցության ոլորտները:

Seas in the Thirteenth and Fourteenth Centuries, p. 125; F. Lane. *Նշվ. աշխ., էջ 83,* B. Commandant. *Նշվ. աշխ., էջ 114:*

[22] Ю. Барсегов. *Նշվ. աշխ., էջ 81:*

[23] Г. Микаелян. *Նշվ. աշխ., էջ 383:* A. Sopracasa. *Նշվ. աշխ., էջ 65–66:*

СОПЕРНИЧЕСТВО МЕЖДУ ВЕНЕЦИЕЙ И ГЕНУЕЙ: МОРСКАЯ БИТВА АЙАСА В 1294 ГОДУ

ЗОГРАБ ГЕВОРГЯН

Резюме

Средиземноморское побережье Киликийской Армении стало ареной второй войны (1294–1299) между республиками Венеции и Генуи. Айас стал центром соперничества итальянских республик. Доказательства этого есть в источнике, связанном с тамплиерами,– «Деяния киприотов» – где говорится, что в 1293 году венецианские галеры прибыли в Айас и там конфисковали генуэзское торговое судно. В конце концов, у морского берега Айаса между венецианским и генуэзским флотами состоялась морская битва, которая стала настолько известной в средневековом мире, что генуэзский анонимный поэт того же периода написал поэму, посвященную ей. Хетум Патмич закончил свою летопись 1294 г., описывая эту морскую битву, так что вполне вероятно, что он был свидетелем этого события. 22 мая 1294 г. у берегов Айаса генуэзские корабли под командованием Никколо Спинолы врезались в общей сложности в 32 венецианские галеры и тариды во главе с адмиралом Марко Базилио. Несмотря на небольшое количество кораблей, генуэзцы одержали блестящую победу, 24 венецианских корабля были захвачены, а Марко Базилио был взят в плен.

THE RIVALRY BETWEEN VENICE AND GENOA. THE SEA-BATTLE OF AYAS IN 1294

ZOHRAB GEVORGYAN

Summary

The Mediterranean coast of Cilician Armenia became the arena of the second war (1294–1299) between the Republics of Venice and Genoa. Ayas became the center of rivalry of Italian republics. We can find evidences in the source concerned with Templars in “The Deeds of Cypriots”, where we can read that in 1293 Venetian galleys arrived at Ayas and there confiscated a Genoese merchant ship. Eventually, at the seashore of Ayas between Venetian and Genoese fleet took place a sea battle, which had so big fame in the medieval world that anonymous Genoese poet of the same period wrote a poem dedicated to this battle. Hetum Patmich ended his chronicle by 1294 describing this sea-battle, so it is likely that he witnessed this event. In May 22, 1294 at the shores of Ayas the Genoese ships, commanded by Niccolo Spinola, crashed with in total 32 Venetian galleys and taridas, led by Admiral Marco Bazilio. Despite the small quantity of ships the Genoese won a brilliant victory, 24 Venetian ships had been seized and also Marco Bazilio was taken captive.